ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ **ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/04** ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ARMEPS.AM ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

 հ. Մարտունի

05.06.2026թ.
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
Անդամներ՝ Ս. Աբրոյան
Վ. Թամոյան
Կ. Դավթյան
Թ. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Սիմոնյան

1. «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/04» **ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

1.1 «**ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/04**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2026թ. ապրիլի 27-ին ժամը 17:00-ն: Մրցույթի հետ կապված կատարվել է մեկ հարցում Armemps համակարգի միջոցով, որին տրվել է պատասխան նույն համակարգի միջոցով: Հարցման և պարզաբանման մասին տեղեկատվությունը նույնպես հրապարակվում է gnumner.minfin.am համակարգ:

1.2 Հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, 2026թ.-ի ապրիլի 27-ին ժամը 17:00-ին

1.3 Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ. փոստ, հեռ. համար
1	« ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ	ք. Վանաձոր, Ավետիսյան փ., 9-1.	elekshin2020@gmail.com +374 98110029

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/04 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը /թվերով և տառերով/	Ինքնարժեք և շահույթ /թվերով և տառերով/	ԱԱՀ /թվերով և տառերով/	Ընդհանուր գինը /թվերով և տառերով/
Չափաբաժին		**1,700,000**			
1	« ԷԼԵԿՇԻՆ » ՍՊԸ		1,595,000 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար)	-	1,595,000 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար)

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3 . Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի կողմից փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում հայտնաբերվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

3.1 «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ -ի հայտում նկատվել են հետևյալ թերությունները.

-Հավելված 1-ում իրական շահառուների կայքէջի հղումը արտացոլում է տվյալներ 2025թ.- ի համար, անհրաժեշտ է ներկայացնել տվյալներ 2026 թվականի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0:

3.Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

3.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից շտկված փաստաթղթեր ներկայացման ժամկետի ավարտից հետո, բայց ոչ ուշ քան հայտերի ներկայացման ժամկետը լրանալու օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, ք. մարտունի , Շահումյան 2 հասցեում:

4. ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/04 ծածկագրով գնման ընթացակարգի նիստը շարունակվեց 07.05.2026թ.-ին ժամը 09:30-ին

4.1 Հանձնաժողովը ուսումնասիրեց «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած շտկումները :

4.2 Մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ -ի, հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0:

5. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

«ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ-ն, որպես ոչ գնային պայմաններով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0:

6. Սույն ընթացակարգի համար՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում:

6.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետում ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

6.2 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշատանքային օրվա ընթացքում (կանխիկ փողի ձևով ներկայացնելու դեպքում) ներկայացնել պայմանագրի

ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով: Եթե ապահովումները ներկայացվելու են բանկային երաշխիքի տեսքով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 (տասը) աշխատանքային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան